434 Անսահման սեր է Քո սերը, Հիսո՛ւս,

1. Անսահման սեր է Քո սերը, Հիսո՛ւս,
Մարդկային լեզուն չի կարող պատմել,
Հրաշք է գործում Քո սերն, ի՛մ Հիսուս,
Որ այս մտքիս երբեք չի հասնում:
Սերդ երբեք չի նախանձում, Հիսո՛ւս,
Սերդ չունի իր մեջ հպարտություն,
Երկայնամիտ է սերդ ու քաղցր է,
Իրենը չի փնտրում, չի բարկանում:

Սերդ երբեք չի վերջանում,
Սերդ մնում է հավիտյան,
Հավերժական սեր ես Դու, ի՛մ Տեր:
Աստված սեր է, Հիսուս սեր է:

2. Մարդացար Դու մեզ համար, Հիսո՛ւս,
Մեզ սիրելով, Տե՛ր, Դու աշխարհ եկար,
Սիրո ծնունդ ես՝ Քո Հայրը սեր է,
Այդ պատճառով աշխարհ ուղարկեց:
Սերդ տարավ Քեզ դեպ Գողգոթա,
Սիրուց էր, որ Դու արյուն հեղեցիր
Եվ հավիտյան նստեցիր Հոր աջում
Որպես Բարեխոս, սիրո Թագավոր: